

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՁ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԻՑԻՆ ՀԵՏ

Հայաստանի երիտասարդության հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Ռոյալնո Շարոյեանի հրաւերով Հայաստան կը գտնուի Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան: Երէկ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին նախարար Յովնանեան ըսաւ, որ պատրաստութեան ընթացքի մէջ է միջպետական պայմանագիր, որ կը ստորագրուի Նոյեմբերին: Հայաստանի ազգային ողիմպիական կոմիտէի նախագահը՝ Իշխան Չարաբեան ներկայացուց պայմանագիրին դրոյթները, որոնց առաջինը կը նախատեսէ մասնագէտներու փոխանակում, կը կապակերպուին միացեալ ուսումնամարզական հասարակութիւններ: Հայաստանի եւ Լիբանանի մարզարաններուն մէջ: Կը նախատեսուի գործակցութիւն մարզական բնաբանով գիտական աշխատանքներու առնչութեամբ: Նախարար Ռոյալնո Շարոյեան լիբանանցի իր պաշտօնակիցը՝ Սեպուհ Յովնանեանը պարգևատրեց ոսկեայ յուշամետալով:

(ԱՐՄԵՆՓՐԵՍ)

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՏԵՍԱԿՑԵՅԱԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՎ ՊԵՏԵՐՈՒՆ ՀԵՏ



Պուլկարիոյ վարչապետը կը ժամանէ Պէյրութի միջազգային օդակայան եւ կը դիմաւորուի վարչապետ Հարիրիի կողմէ

Պուլկարիոյ վարչապետ Սիմէոն Կոթա երէկ բարձրաստիճան պատերազմական մը ընկերակցութեամբ ժամանեց Լիբանան եւ իշխանութեան երեք պետերուն հետ տեսակցութիւններ ունեցաւ:

Պուլկարիոյ ղեկավարը Պէյրութի օդակայան ժամանեց կէսօրէ առաջ եւ դիմաւորուեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ բարձրաստիճան պաշտօնատարներու կողմէ:

Հարիրի եւ Կոթա վարչապետներուն մէջ դուրսի կանգնուած մը ընթացքին քննարկեցին երկկողմանի յարաբերութիւններն ու զանոնք զարգացնելու միջոցները, մասնաւորապէս տնտեսական ոլորտներէն ներս: Քննարկուածի նիւթ դարձան նաեւ Միջին Արեւելքի հարցերը:

Այնուհետեւ երկու վարչապետներուն միացան պուլկարիոյ պատերազմական անդամները՝ փոխադրամիջոցներու, արտաքին գործոց եւ տնտեսութեան նախարարները եւ լիբանանցի նախարարներ Մահմուտ Համմուտ, Նաժիպ Միքաթի, Միշէլ Ֆարաժի եւ Ժան Լուի Քրոտահի, ինչպէս նաեւ նախարարաց խորհուրդի ընդհանուր քարտուղար Սուհէյլ Պուսթի եւ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամէտ Իսա:

Ժողովի բացումին Հարիրի բարի գալուստ մաղթեց իր պաշտօնակիցին եւ յոյս յայտնեց, որ այս այցելութիւնը հիմ կը դառնայ երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդումին հետագայ քայլերուն:

«Կ'ապրինք շրջանի մը մէջ, որ կը տառապի մեծ հարցէ մը, որուն լուծումը շատ երկար կը տեւէ, բայց այս պարագան շատ չ'ազդեր Լիբանանի վրայ, որովհետեւ մեր կառավարութիւնը որոշած է չ'արժանանալ իր բարձրագուծումի եւ տնտեսական ծրագիրներու գործադրութիւնը, միաժամանակ զոչ ուղղելով վերակենդանացնելու խաղաղութեան գործընթացը», ըսաւ ան:

Հարիրի աւելցուց. «Գիտենք, որ շրջանային տագնապն ու մեր տնտեսութիւնը իրարու կապ-

ած են, բայց ջանք կ'ընենք կարելի եղածին չափ սահմանափակելու մեր առօրեային վրայ շրջանային հարցերու անդրադարձը»:

Ան նաեւ խօսեցաւ անպատեականացման եւ ներդրումները քաղաքացիներու կառավարութեան քայլերուն մասին, ինչպէս նաեւ Եւրոպական Միութեան հետ գործընկերութեան համաձայնագրի ստորագրութեան մասին:

Ժողովի աւարտին, Լիբանանի արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամէտ Իսա Պուլկարիոյ դեսպանին հետ ստորագրեց համաձայնագիր մը, որուն մէջ իւրաքանչիւր երկրի կը վերընդունին միջոցները հարցերին կեցութեան համար դուրս գրուողները:

Ժողովին ետք Հարիրի յայտարարեց, որ իր պուլկարիոյ պաշտօնակիցին այցելութիւնը պիտի նպաստէ երկկողմանի յարաբերութեանց ամրապնդումին եւ ան Լիբանանը ընտրած է որպէս մուտք՝ դէպի արաբական աշխարհ:

Կոթա ուրախութեամբ յայտնեց Պէյրութ այցելութեան համար, հաստատելով, որ Միջին Արեւելքի տնտեսական մայրաքաղաքի դերին վերատիրանալու Պէյրութի երթը յատուկ կ'ընթանայ:

«Այս այցելութիւնն շատ կարեւոր է եւ անհրաժեշտ է որոշ միջոցառումներով զիւրացնել երկու երկիրներուն ու

անոնց քաղաքացիներուն յարաբերութիւնները», ըսաւ Պուլկարիոյ վարչապետը եւ հաստատեց, որ քննարկուած տնտեսական հարցերն էին:

ՆԱԽԱԳԱՐ ԼԱՆՈՒՏԻՍՕՍ

Պուլկարիոյ վարչապետը պաշտօնական պատերազմական նախարար Միշէլ Ֆարաժիի ընկերակցութեամբ այցելեց Պատայ-տայի նախագահական պալատ եւ նախագահ Գորէմի Լահուտի հետ տեսակցեց ետք յայտարարեց, որ քննարկած են միջին արեւելեան թղթածրարին կապուած հարցեր:

«Լիբանան Միջին Արեւելքի տուն է, եւ ակնհայտ է, որ այստեղ մեկնած՝ յատուկ կարեւորութիւն կը զգենու այս այցելութիւնը», ըսաւ ան եւ յայտնեց, որ նախագահ Լահուտի հետ իր ունեցած օգտաշատ հանդիպումին խօսուած է երկկողմանի յարաբերութիւնները ամրապնդելու միջոցներուն մասին: Այս ծիրէն ներս կ'իջան ստորագրուած համաձայնագիրները, ըսաւ ան:

Պուլկարիոյ ուրախութեամբ պիտի ընդառաջէ Ֆրանսախոս երկիրներու կազմակերպութեան գերաստիճանին մասնակցելու հրահրին, յայտարարեց ան:

Պուլկարիոյ պաշտօնատարը ապա այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիտ Պրերիի:

ՊԱՂԵՍԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳԼԱՊ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ԽՍՏԱՑՆԵ ԱՅՍՐԱՅՈՐԴԱՆԱՆԻ ԵՒ ԿԱԶԱՅԻ ՊԱՇՏԱՐՈՒՄԸ, ՄԻՆՉ ԱԿԱՆՈՒԱԾ ԻՆՔՆԱՇԱԳԱՐԺ ՄԸ ՊԱՅԹԵՅԱԻ ՏԻՒՄԻՍԱՅԻՆ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՁ

Այն պահուն, երբ իսրայէլեան բանակը կը խտացնէր Այսրյորդանանի եւ Կապալի պաշարումը, հիւսիսային իսրայէլի Ռում էլ Ֆահմ քաղաքին մօտ ականուած ինքնաշարժ մը պայթեցաւ՝ սպաննելով մէկ հոգի եւ վիրատուրելով բազմաթիւ ուրիշներ: Ըստ իսրայէլեան ոստիկանութեան՝ ականուած ինքնաշարժը ժամանակէն առաջ պայթած է. անիկա շատ հաւանաբար կ'ուղղուէր իսրայէլեան մեծ քաղաք մը:


Ոստիկանութիւնը կը հաղորդէ, թէ ինքնաշարժին վարորդը արքա էր եւ կը պատրաստուէր խճողուած վայրի մը մէջ անձնասպանական գործողութիւն կատարել, սակայն ականու արկածով մը պայթած է ժամանակէն առաջ:

Միւս կողմէ, երէկ Այսրյորդանանի եւ Կապալի քաղաքներուն միջեւ երթուելը արգիլուեցաւ: Իսրայէլեան բանակը փակեց քաղաքներուն ճամբաները եւ պաղեստինցի ժողովուրդը «բանտարկեց» քաղաքներուն մէջ: «Ռեւէ մէկը դուրս պիտի չելլէ քաղաքէն, ոչ ալ ներս պիտի մտնէ: Ամբողջութեամբ փակած ենք զանոնք՝ իբրեւ ինքնապաշտպանութիւն եւ նախազգուշութիւն պաղեստինեան նոր գործողութիւններու», ըսաւ պաշտպանութեան նախարար Պենիամին Պըն Էլիպար:

Իսրայէլ այս որոշումը տուած էր պաղեստինեան անձնասպանական վերջին գործողութիւններուն: Միւս կողմէ, իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէզ երէկ Գահիրէի մէջ հակազդել գործողութիւններուն:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Տաւեթ Արաֆատի խորհրդական Նապիլ Ապու Ռուտայնա դատապարտեց իսրայէլեան վերջին քայլերը եւ միջազգային ընտանիքէն պահանջեց ճնշել Թէլ Աւիւի վրայ՝ քակելու պաղեստինեան քաղաքներու խիստ պաշարումը:

Նշենք, որ իսրայէլի իրաւապաշտպանութիւնը իշխանութեան քաղաքներուն, ինչպէս նաեւ Ռաֆաիլ ամբողջութեամբ անջատած է Կապալի մնացեալ քաղաքներէն: Իսրայէլեան ուժեր Նապիլուի մէջ



Իսրայէլացի փակած են ճամբաները Գոյնիսի հետիոտն պաղեստինցիներուն դիմաց

սպաննած են եօթը պաղեստինցիներ, քանի որ են քանակաւորաններ, կատարած են անտեղի խուկարկութիւններ եւ ձերբակալած են չորս պաղեստինցիներ, որոնցմէ մէկը՝ Համաի պատասխանատու մը:

ՓԵՐԷՉ՝ ԳԱՇԻՐԻՒՄԸ



Փերէզ՝ Մուպարաքի եւ Մահերի հետ ժողովի ընթացքին

Միւս կողմէ, իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէզ երէկ Գահիրէի մէջ հակազդել գործողութիւններուն:

երկուստեք վայրագութեան: Մուպարաք ըսած է, թէ այնքան ստույգ որ պաղեստինեան հողերը պիտի

ԱՅՍՐՈՐ՝ ԱՊԱՅՈՐԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ԺՈՂՈՎ

ՄԱԿԻ Ապահովութեան խորհուրդը այսօր պիտի քննարկէ Ժենիւի գաղթականներուն մէջ Ապրիլին իսրայէլեան բանակին կողմէ կատարուած «բռնարարներուն» մասին ՄԱԿի վերջին տեղեկագիրը, որ կ'ըսուի, թէ պաղեստինցիներուն դէմ հոն ջարդ չ'է կատարուած, թէ «իսրայէլեան բանակը չ'ափսոսանցած է ուժի գործածութիւնը»...

Պաղեստինցի պայրացած են ՄԱԿի այս կողմնակալ տեղեկագիրէն, որ նաեւ աւելի քան 500 պաղեստինցիներ կը յիշատակուի... 52:

Շատ հաւանաբար Ապահովութեան խորհուրդը եւս տեղեկագիրէն քան չ'ապարտարէ...

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԿԸ ՊԱՆԱՆՁԷ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Քարիմ Բագրատունի երէկ գոհուեցաւ իր յայտնեց ընթացքին հետեւյին ասպիտակեցումն քաղաքներին բաճակեցի աւարտին համար եւ կոչ ուղղեց անյապաղ իրագործել նաեւ այլ մարգերու ասպիտակեցումը:

Բագրատունի, պահանջեց ներկայ կառավարութեան փոփոխութիւնը՝ մտահոգութիւն ունենալով տնտեսական յստակ ծրագիրի մը չ'զոյսութիւնը, պետական վարչակազմը վերանորոգութեան չ'ենթարկելու դրոյթները եւ քրիստոնեաներու ներկայութիւնը ճիշդ ձեւով չ'ներկայացնելու հարցը:

Բագրատունի իր խօսքին մէջ շեշտեց նաեւ, որ Փաղանգաւոր կուսակցութիւնը գործիք կը կանգնի մարտնչներու նախալա Պուրոս Սֆէյր պատերազմի հաստատելու համար ազգային միասնականութիւնը, համախմբելու համար շարքերն ու խօսքերը եւ հեռու մնալու անհատական նեղ հաշիւներու հետապնդումէն:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕՂՈՒԺԸ ՈՍՐԱԿՈՑԵՑ ԿԱԶԱՅԻ ՄԷՁ ԹԻՐԱՆՆԵՐ

Այն պահուն, երբ իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն պաշտպանութեան նախարար Պենիամին Պըն Էլիպարի եւ պաղեստինեան այլ պատասխանատուներու հետ սեղմ ժողով մը կը գումարէր, որոշելու համար ինչպէ՞ս հակազդել պաղեստինեան իրաւաստներուն, իսրայէլեան օղուծի ուղղաթիռներ 3 հրթիռներ արձակեցին Կապալի մէջ համալիրի մը վրայ, որ ըստ իսրայէլի՝ պիտի անջարկէ եւ վէճերու պաղեստինեան պահեստանոց եւ գործարան մըն էր: 4 պաղեստինցիներ ծանրորէն վիրատուրուած են եւ համալիրը փոշի եկած է, կը հաղորդէ իսրայէլեան ոստիկանութիւնը:

**ԵՐԿՐԻՆ ԲԱՐԳԱԽԱՆԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐՈՒՆ ԶՈՒԳԱՀԵՈՒ
ՊԵՏՔ Է ԱԶԱԼՈՒՐՁ ՀԵՏԵԻԼ
ՆԱԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ**

ԿԸՄԵ ՆԱԽԱԳԱՐ ԼԱՇՈՒՆ



Լաճուտ եւ Սարաֆեան

Հանրապետության նախագահ զոր. էմիլ Լաճուտ երկհ հաւաստեց, որ տնտեսութիւնը վերականգնելու եւ բոլոր շրջաններէն ներս հաւասարակշռուած բարգաւաճում կատարելու պետութեան կարողութիւնը կ'աճի ներքին կայունութեան ամրապնդումով:

Արտաքին կուսակցութիւններու եւ քաղաքացիներու պատուիրակութիւնը ընդունած ատեն ան նաեւ գիտել տուաւ, որ վերջին երեք տարիներուն Լիբանանի որդեգրած սկզբունքային կեցուածքները եւ Սուրիոյ հետ գործակցաբար Լիբանանի ռազմավարական ընտանքները արդիւնաւորուած են ազգային մեծ իրագործումներով, որոնց ամրապնդումին համար ճիշդ չի խնայեր պետութիւնը, ըսաւ ան:

Նախագահ Լաճուտ նաեւ հաւաստեց որ ինք վճռած է գործադրել բարգաւաճումի բազմաթիւ ծրագիրներ բոլոր շրջաններէն ներս, մանաւանդ այն շրջաններուն մէջ, որոնք անցեալին իրաւագուրկ մնացած են, Արքարի պէս:

Երկրի բարգաւաճման կարիքներու զուգահեռ պէտք է աշխուրջ հետեւիլ նաեւ շրջանային զարգացումներուն, վերահաստատելով ՄԱԿի որոշումներու գործադրութեան միջոցաւ Միջին Արեւելքի մէջ արգար, վերջնական եւ ընդհանուր խաղաղութիւն հաստատելու Լիբանանի պահանջը:

Նախագահ Լաճուտ երկհ ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Քանաւայի դեպքին Հայկ Սարաֆեանը եւ նախկին փոխ վարչապետ երեսփոխան Միշէլ Մըրը:

**ՊՐՐԻ - ՀԱՐԻՐԻ
ԿԱՐՃԱՏԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրի երկհ իր գրասենեակին մէջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին. կարճատեւ հանդիպումին մասին ոչ մէկ յայտարարութիւն կատարուեցաւ:

Պրրի երկհ ընդունեց Աշխատատեղի Ընդհանուր Համարաշնակցութեան նախագահ Դասան Դրսը, փոխ նախագահ Պասան Թլէյսը, պետութեան անկախ վարչութիւններու աշխատատեղիներու եւ սենտիքաներու պատուիրակութիւնը եւ ելեկտրակապութեան ընկերութեան, ինչպէս նաեւ Պէյրութի նաւահանգիստի հացահատիկի մթերանոցի աշխատատեղիներու եւ պաշտօնէաներու սենտիքաներու պատուիրակութիւնները: Ներկայ էր երեսփոխան Միսիլ Տահէր:

Քննարկումի նիւթ դարձաւ յիշեալ կառոյցներու եւ հաստատութիւններու ապապետակաւանցումէն ետք անոնց պաշտօնէաներուն եւ աշխատատեղիներուն ձակատագիրը:

**ՃԱԽՈՒ
ՅԱՐԿԱՐԱԺԻՆ**

● 2ալքայի մէջ, 160 քառ. մետր, ճամբորդութեան պատճառով: Վճարումը կանխիկ: Հեռ. 03 - 284581:

ԿՈՒԶՈՒԻ

● Ոսկերչական հաստատութիւն մը կարիքը ունի «օֆիս պոյ» մը: Դիմել հեռ. 01 - 263355, 01 - 241424:

**ԴՈԿՏ. ԿԻՎԱ
ԷԼ ՐԱԲՍ
ԵՒ
ՏՈՔԹ. ՈԱԶՄԻԿ
ՈՍԿԵՐԻՉԵԱՆ**

ԽՕՍԵՅԵԱԼՔ

3 Օգոստոս 2002
Պէյրուք

**ՆՇԱՆՈՒԱԾ
ՍԱԼԻ
ԼԱՏՈՅԵԱՆ
ընդ
ՐԱՅԿ
ԹՈՔԱՅԵԱՆ**

Պէյրուք, Կիրակի,
4 Օգոստոս 2002

ԼՕԵԻ
«ԿԱՐՍ» ՄԱՍՆԱԾԻՒՂ

**ԱՆՂԱՄԱԿԱՆ
Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 8 Օգոստոս 2002, առաւօտեան ժամը 9:30ին, Էշրեֆիէի «Ազատամարտ» ակումբի «Չուխատարեան» սրահին մէջ: Ընկերուհիներու ներկայութիւնը խիստ փափաքելի է:

**ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԱՅՍ ՏԱՐԻ
ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ԼԻԲԱՆԱՆ**

ԿԸ ՎՍԱՀԵՅՆԷ ԴԵՍՊՈՆ ՍՈՒՊԶԱՆԻ

Իրանի դեսպան Մոհամէտ Ալի Սուպհանի երկհ յայտարարեց, որ Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի Լիբանան այցելութեան ծրագիրը չէ ջնջուած, այլ կը մնայ ի պորտ. ան բացատրեց որ այս այցելութիւնը կը նախատեսուէր Սեպտեմբերին, բայց յետաձգուած է հաթեմի բազմապարզ ըլլալուն պատճառով, սակայն անկախ անպայմանօրէն տեղի պիտի ունենայ ա'յս տարի:



Համմուտ կ'ընդունի Սուպհանի

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի հետ իր ունեցած տեսակցութեանէն ետք Սուպհանի նաեւ յայտնեց, որ նախարար Համմուտ մօտ օրէն պիտի այցելէ Թեհրան, բայց այցելութեան թուականը պարզացնելու հետեւեալ օրերուն իր հետեւեալ իրաւագուրկ մնացած են, Արքարի պէս:

Իրանի դեսպանը ըսաւ, որ հանդիպումին ընթացքին քննարկած են Լիբանանի եւ Միջին Արեւելքի վարագումները, ինչպէս նաեւ երկկողմանի յարաբերութիւնները պարզացնելու հետեւեալ օրերուն իր հետեւեալ իրաւագուրկ մնացած են, Արքարի պէս:

Լու հեռանկարները, մանաւանդ պօսաշրջալին, տնտեսական եւ ենթակառոյցի ոլորտներէն ներս միացեալ յանձնախումբերու աշխուժացումը: Սուպհանի ըսաւ, որ ի տես շրջանային ցնցումներուն եւ Լիբանանի, Սուրիոյ եւ Իրանի ուղղուած խաբայիլեան սպառնալիքներուն, այդ երկիրները պարտին առաւելագոյն չափով պատու ըլլալ եւ անբապնդել իրենց միջեւ համակարգումն ու փոխադարձ վարակցութիւնը:

**ՀԱՐԻՐԻ ԵՒ ՊԵՐԸ
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ
ՈՒՆԵՑԱՆ**



Հարիրի եւ Պէրը
Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկհ ժողով մը գումարեց Միացեալ Նահանգներու դեսպան Վինստը Պէրըլի հետ: Քննարկուեցան երկրին եւ շրջանին վերջին իրադարձութիւնները:

ՇՐՋԱՊՏՈՅՏ ԴԵՊԻ ԿԻԼԻԿԻԱ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Զրիտունեական Դաստիարակութեան Բաժանմունքի կազմակերպութեամբ, տեղի պիտի ունենայ չորսօրեայ շրջապտոյտ դէպի Կիլիկիա, **ԵՐԵՎԱՆԻ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՈՒՐԲԱԾ, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2002:**

Շրջապտոյտը կ'ընդգրկէ կիլիկեան կարգ մը քաղաքներ, ինչպէս՝ Ատանա, Կապադովկիա, Կեսարիա, Էվերէկ, Հաճըն, Սիս՝ որ եղած էր Կիլիկիոյ կաթողիկոսանիտ քաղաքը, եւ այլ շրջաններ: Հետաքրքրուողները կրնան դիմել ՏԻԿԻՆ ՎԵՐԺԻՆ ՍԻՐԱՆՈՍԵԱՆԻ՝ հեռաձայնելով 01 - 894263, 03 - 602747 եւ ՏԻԿԻՆ ԷՕԺԵՆ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ՝ 01 - 266605 թիւերուն:

Արձանագրութեան վերջին պայմանագրով 14 Օգոստոս 2002:

**ԶԵՐՍՈՆԵԱԿԱՆ
ԴԱՏԻՆԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆԷ**

**BALKAN Holidays
VARNA**

295 \$

Կը ներգրկէ՝ Երբողարձի տոմս + պանդոկ + փոխադրութիւն

**ՎՃԱՐՄԱՆ
ԴԻՒՐՈՒԹԻՒՆ**

Մազարա, Ուաքքի Ռում շէք, «Պանք Աուտի»
01-304553/63 03-273251

ԿՈՒԶՈՒԻ

● Հաշուապահ օրհորդ մը, անգլերէն եւ համալեզու գիտնալ՝ պայման: Հեռ. 01-242549:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՃԱՇԿԵՐՈՅԹ

● Գեղարուեստական ճոխ յայտագիր

Տեղի կ'ունենայ Կիրակի, 11 Օգոստոս 2002ի կէսօրուան ժամը 12:00էն սկսեալ, **JEDOUDNA** ճաշարանին մէջ, Պէյք Մերիի մայրուղիին վրայ:

Տոմսերը կարելի է ստանալ «Լ. Շանթ» կեդրոնէն, Պուրճ Համուտ, հեռ. 01-265899 եւ 249375:

Կազմակերպութեամբ
Հ.Յ.Լ.Ե.Մ.ի «Րաֆֆի» Մասնաճիւղի

Հայկական Երգերու Փառատօն

ԵՆՏԹ ԿՈՒՆԵՆԱՆ՝

ԵՍԷԷ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ - ՍՈՒՐԻԿ ՓԱՐՊՈՒՆԵՆ - ՎԻԳԷՆ ՏԻՇԷՔԷՆԵՆ - ՀՐԱԶ ԿԱՅՍՅԱԿԵՆ - ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵՆ - ԿԵՐՕ ԿԱՊՈՏՅԱԿԵՆ - ՄԻՐԱՍ ԱՎԱՐՈՆԵՆ - ԳՕԳՕ ԿԵՕԶԷԷՔԵՆ:

ՄԱՆՆԱԿՈՒԹԵԱՄԲ՝
ՍԵԴՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ ՈՒՐԲԱԾ 9 ՕԳՈՍՏՈՍ 2002ի, ԵՐԵՎԱՆԵՆ 8:00ին, ՅՈՎԻԿԵՆ ՊՕՂՈՍԵՆ ՀԱՆԳՍԱՍՏՐԱԿՆԻ ՄԷՋ, ԳՈՐԶ ՀԱՍՈՒՆ՝

Սակ՝ 5000 լ.ա.

**ԵԼԵԿՏՐՈԿԱՆՈՒԹԵԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՅՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ**

Խորհրդարանական յանձնախումբերը երկհ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրոզըլի գլխաւորութեամբ եւ ուժանիւթի եւ ելեմուտքի նախարարներ Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտունի եւ Ֆուատ Սինիորայի ներկայութեամբ գումարուած ժողովին վաւերացուցին ելեկտրականութեան մարզի վերակազմակերպման (ապապետականացման) օրինագիծի 19 յօդածները. քննարկուածը պիտի շարունակուի Հինգշաբթի օրուան նիստին:

Նախարար Պալտուն նիստէն ետք ըսաւ, որ ժողովին միջնորոտը դրական էր եւ ելեկտրականութեան ընկերութիւնը ապապետականացնելու երթը կը շարունակուի:

Երկհուան նիստին կազմուեցաւ ենթայանձնախումբ մը՝ վերածակելու օրինագիծի 5րդ յօդուածը, որ կը վերաբերի ելեկտրականութեան ընկերութիւնը ապապետականացնելու համար կատարուող աճուրդի կամ նուազուրդի կանոններուն: Ենթայանձնախումբին մաս կը կազմեն նախարար Պալտուն եւ երեսփոխաններ Ուալիտ Իսօ եւ Մոհամէտ Ֆնէյշ:

ONE SECOND IS ENOUGH...
Արագը կը Պատահի ԵրկարՄտքներ Մը Մեզ...

...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՆԵ ՆԵՐԿԱՅ ԵՆԵ ԱՄԵՆ ԵՐԿԱՅՐԿԱՆ.

ԱՏՀԻԼ AFHIL

Աֆիլ-ի Ընդ, Բ. Յարկ, 7եւ, Եւ Յարկ (01) 262231-242556-242557
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

Wedding lists at Galerie Vanlian, you will surely lose your mind...

**Galerie Vanlian
HOME TRENDS**

ԸՈՐԱ ԴՊՈՒՄ - ԹԵԼ 01 241955 - ԲԱՅ 01 241955 - ԷՄՔՄ 01 241955

ՈՒՐԻՇ Ե ՀԱՅԱՍՏԱՆԸ

**ԵՐԱԶ ԻՄ ԵՐԿԻՐ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՐՋԱՊՏՈՅՏՈՎ**

5 ՍԵՊՏԵՄԲԵՐԷՆ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ
FULL - BOARD 689 \$էն սկսեալ
7օրեայ եւ 14օրեայ ճոխ ծրագիրներով

**ՎԱՅԵԼՔԻ
ՄՆՄՈՂԱՆԱԼԻ ՕՐԵՐ
Կեցութիւն՝ VALENCIA *** հիւրանոց**

Շրջապտոյտի առաջնորդ՝
ՕՆՆԻԿ ԳԱՆԹԱՐՃԵԱՆ
Տեղերը ապահովելու համար դիմել՝
մինչեւ 20 Օգոստոս

ԱԽԹԱՄԱՐ ԸՆԿԵՐԱԿ.
01 - 260850 եւ 03 - 203533
ANSER TOURS:
01 - 562044 - 5 եւ 01 - 562870 - 71

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԱՅՆԵԼ ՀԸԼՈՒԻԵ գաղթականներն ներս նախանցեալ գիշեր Անսար ծայրայեղական խմբակն անջատուած արմատականներու խումբ մը, Կոր կը ղեկավարէ Իմատ Եսախն, կրակ քացած է Համաս շարժումի անդամներու վրայ, վարաւորելով չորս հոգի: Արարքին դրոշմապատճառը այն է, որ արմատականները կը կարծեն, թէ Համաս օգնած է իրանական իշխանութիւններուն, որպէսզի կարենան ձեռքարկել երեք բանակայինները սպաննած Պատիհ Համատէն:

Արարքէն ետք երկու կողմերէն պինտալներ դիրքեր գրաւեցին գաղթականի տարբեր վայրերու մէջ, բայց մինչեւ առաւօտ շարունակուած հաղորդակցութիւնները արդիւնաւորուեցան, վերջ դրուեցաւ լարուածութեան եւ բնականօրէն վիճակ ստեղծուեցաւ գաղթականներն ներս:

● ՊԱՆՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարար Խալիլ Հըրրուի երէկ հարցազրոյցի մը մէջ յայտնեց, որ ապահովութեան մարմինները տարեկան կրկն օրոշած են վերստեղծեան ենթակից զէնք կրելու արտօնագիր շնորհելու չափանիշները: «Մտաւորութիւն մը մատուցելու փոխարէն, այդ արտօնագիրը սկսած տրուելի կարիքի հիմամբ, եւ այդ արտօնագիրը ստանալու նոր եւ խիստ չափանիշներ որդեգրուեցան. երկու տարի առաջ շնորհուած ութսուն հազար արտօնագիրին տեղ այս տարի տրուեցաւ միայն տասը հազար արտօնագիր. այժմ աշխատանք կը տարիս այդ թիւը նուազեցնելու վեց հազարի», ըսաւ ան:

Հըրրուի յայտնեց, որ այժմ երկու տեսակ արտօնագիրի դրուութիւն որդեգրուած է. առաջինը՝ զէնք ունենալու եւ կրելու արտօնագիր, իսկ երկրորդը՝ զէնք ունենալու բայց զայն միայն գործատեղիին մէջ պահելու արտօնագիր՝ ինքնապաշտպանութեան համար, եթէ գործի բնոյթը անհրաժեշտ կը դարձնէ զայն:

● ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ատենարտ երէկ ճշդեց Սայտայի մէջ երեք բանակայիններու սպանութեան հարցով յանցագործ Պատիհ Համատէի (Ապու Օպէյտա) դատավարութեան թուակերպ: Համատէի, անոր նշանածին եւ նշանածին մօր դատավարութիւնը պիտի սկսի Օգոստոս 26ին:

● ԱՐՏԱԿԻՆ գործող նախարար Մահմուտ Համմուտ երէկ հաւանագրեց, որ Լիբանան կառուած կ'մնայ իրաքի գինուորական հարուած ուղղելու սպառնալիքներուն գծով Արաբական Լիգայի եւ իսլամական համագումարի կազմակերպութեան գերատեսչան ժողովներու մերժողական կեցուածքներուն:

Համմուտ ընդգծեց, որ այս հարցին առնչութեամբ անհրաժեշտ է առաւելագոյն չափի միջ-արաբական գորակցութիւն, մանաւանդ որ այս հանգրուանը փոթորկուած է:

Միւս կողմէ, Եգիպտոսի արտաքին գործող նախարար Ահմէտ Մահմուտ երէկ հեռաձայնեց Համմուտի՝ քննարկելու համար պաղեստինեան շրջաններու իրավիճակը:

● ԵԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ընկերութեան պաշտօնէականներու եւ աշխատակիցներու սենտիքային պատգամաւորներու խորհուրդը երէկուան Ծարը՝ էջ 10

«ԸՍԵԼԻՔՆԵՐԻ ԱԻԵԼԻ ԸՆԵԼԻՔՆԵՐՈՎ ԼԵՅՆԵՆՔ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»

ՊԱՏԳԱՄԵՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԾՐՁԱՆԱԲՐՏՆԵՐՈՒՆ

Կիրակի առաւօտ, 4 Օգոստոս 2002ին, Արամ Ա. կաթողիկոս, Պիքֆայի վանքին մէջ ընդունեց Հայաստանեայց Եկեղեցւոյ Համայնարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ) անդամ այս տարուան շրջանաւարտները: Հանդիպումին ներկայ էին նաեւ մեծ թիւով ՀԵՀՈՄ-ականներ: Վեհապատը իր պատգամը փոխանցեց շրջանաւարտներուն եւ ընդգծեց հետեւեալ կէտերը:—

1) Ծրջանաւարտ ըլլալ չի նշանակեր ուսումնական գիտութեան հետաքննարկումները շարունակելու անհրաժեշտ պայտքը: Այսօրուան աշխարհին մէջ ինչ որ ձեռք կը ձգենք որպէս մասնագիտութիւն՝ բաւարար չէ, որովհետեւ իւրաքանչիւր մասնագիտութեան մարզէն ներս ամէն օր նոր գարգացումներ տեղի կ'ունենան: Պէտք է քայլ պահել անոնց հետ:

2) Ուսումը պէտք է տանել կեանքին: Գիրքը, տետրակը, ուսուցիչը ու դասարանը անկասկած որ կարելու են, սակայն ուսումը կը մնայ ծանօթութեան երեւոյթի չի վերածուիր:

3) Ուսումը պէտք է բաժնել ուրիշներուն: Կուսակցին ոչ թէ մեզի հարկաւոր չէ, հաւաքականութեան մը համար՝ Այլ

հաւաքականութիւնը մեր ազգն է, հայրենիքն է ու համայնքը: Պէտք է բաժնել մեր ստացած ուսումը ուրիշներուն հետ, ի խնդիր հաւաքական նպատակներու ու երազներու իրականացման:

Այս կէտերը շեշտելէ ետք վեհապատը եզրակացուց իր պատգամը ըսելով:—

«Որեւէ ժամանակէ աւելի Լիբանանի հայութիւնը պէտք ունի իր երիտասարդութեան, յատկապէս ուսեալ, մտաւորական երիտասարդութեան: Համայնքի մը կեանքը կը ճահճանայ երբ նոր արիւն չի ներարկուիր անոր երակներուն մէջ: Լիբանանի հայութեան կեանքը որոշ նահանջ մը կ'ապրի: Պատճառներու մասին չիսօսինք: Այս կամ այն չափանքներ: Մտահոգիչ կացութեան մը դիմաց կը գտնուինք բոլորս: Պէտք է միասին մտածենք թէ ի՞նչ կրնանք ընել, Յաճախ լսելիք ունինք, սակայն մեր ընելիքներու մասին շատ քիչ կը մտածենք: Ընելիք ունինք բոլորս ալ՝ բոլոր կազմակերպութիւնները, բոլոր կառուցները եւ իւրաքանչիւր հայ: Մեր ընելիքները պէտք է ճիշդ կերպով տեսնենք, ճիշդ կերպով ծրագրենք, մեր նպատակը յստակօրէն ճշդենք եւ ապա նստինք հաւաքական աշխատանքի: Երբեմն ականջաւոր ու ականատես կ'ըլլանք այնպիսի երեւոյթներու, որոնք կը մտահոգեն ու կ'ընդվզեն զիս: Լիբանան»

Ծարը՝ էջ 10

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

5 Օգոստոսի տեղական թերթերը գլխաւորաբար անդրադարձան Բեարուտի մէջ նախագահ Լահուտի կատարած Շապրուի ջրամբարին հիմնարկէքին եւ Իսրայէլի մէջ պատահած անձնասպանական սուր գործողութեան, որ իւլեց շուրջ 10 Կոն եւ աւելի քան 50 վիրաւոր:

«Պայրաք» խօսելով նախագահ Լահուտի Քեարուան կատարած այցելութեան մասին գրած է. «Քեարուան քաղաքի ընդունելութեան մը տուաւ նախագահ Լահուտին. նախագահը հաստատեց, որ վճած է բարգաւաճման կենսական ծրագիրներ յաջողցնել բոլոր շրջաններուն մէջ: «Տիար» նշած է, թէ Քեարուանի մէջ ժողովրդային մեծ ընդունելութիւն կը սպասէր նախագահ Լահուտի. հանրապետութեան նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

«Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

«Սաֆիր» անդրադարձաւ Շապրուի ջրամբարին հիմնարկէքին գրած է, թէ նախագահը խոստացաւ վճարուած շարունակել անոր շինութիւնը: Ըստ թերթին՝ ան ըսած է. «Պուշարները պէտք է ծախսուին պէտք եղած տեղերը, միշտ պէտք է առաջնահերթութիւններ նկատուին»:

Ըստ «Նահապ»-ի, «Սաֆաւուն» մինչեւ Կապա՝ պաղեստինեան 7 գործողութիւններ, 14 Կոն եւ տասնեակներով վիրաւորներ. Իսրայէլ կը սպառնայ անխնայ պատերազմ մղել. իսկ ձորձ Պուշ աշխարհին կոչ կ'ընէ ահաբեկչութեան դէմ միասնաբար պայքարելու: «Քիֆահ Արապի» նշած է, թէ անձնասպանական գործողութիւններու շարք մը կը կր հիւսիսը Լիբանանի քաղաքացիներուն վրայ կայացած համաձայնութիւնը ակնհայտ համար: «Տիար» նշած է. «Նախարար Քըրուակի եւ բիշոյի միջեւ տեղեկագրութիւններ կը սկսին»:

«Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

«Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

«Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

«Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

մաճայն, Հըրպալլա վստահեցուցած է, որ գերիներու փոխանակման թղթածրարը պիտի ընդգրկէ նաեւ յորդանանցի բանտարկեալներ: Ըստ թերթին, Թուրքիոյ պինդադարական ղեկավարութեան մէջ անակնկալ փոփոխութիւններ տեղի կ'ունենան: «Պայրաք» գրած է, թէ նախագահ Մուպարաք եւ Շիւնն Փերէյ այսօր պիտի քննարկեն խաղաղութիւն կայացնելու անհրաժեշտ քայլերը: Փաքիստանի նախագահ Մուշարրաֆ կը սպաննուի անուշադրութիւնը: «Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

«Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

«Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

«Սաֆիր» նշած է. «Պուշ կը ցախ... Փերէյ Գահիրէի մէջ պինդադարի առնչութեամբ բանակցութիւններ կատարելու համար. Շարուն խօսելով Սաֆաւունին մինչեւ Կապա տեղի ունեցած գործողութիւններուն մասին նախագահը վճած է լուծել բոլոր հարցերը. էլեկտրականութեան թղթածրարի քննարկումը կը մտնայ, արդեօք հարցը լրջօրէն պիտի լուծուի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սիրելի՛ հայրենակիցներ, Լիբանանում Հայաստանի դեսպանութիւնը տեղեկացնում է, որ 2002 թ. Հոկտեմբերի 6-9ը «Ռուսաստանի Հայերի Միութիւնը» Մոսկուայի «Պրեպրիդենտ-Օթել» հիւրանոցում (հասցէն՝ Բ. Եակիմանկա 24) կազմակերպում է միջազգային կոնֆերանս «Հայերը դարերի սահմանագիծին եւ միջազգային յարաբերութիւններին այժմեական խնդիրները», որի շրջանակներում աշխատելու են երկու աշխատախմբեր հետեւեալ թեմաները՝ քննարկելու նպատակով.

«ՄԻՋԱԶԳԱԿԻ ՅԱՐԱԵՐՈՒԹԻՒՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԿԻՆ ԸՆԴՀԱՆՎԱՆՈՒԹԻՒՆ»

- 1.- Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերութիւնը եւ Հայաստանի արտաքին փոխլրացման քաղաքականութիւնը սուր միջազգային պայմաններում:
- 2.- Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման մէջ ցեղասպանութեան գործընթացը:
- 3.- Ղարաբաղեան հակամարտութիւն. վիճակը եւ լուծման ուղիները:
- 4.- Հայաստան - Սփիւռք. Սփիւռք - Սփիւռք յարաբերութիւնների կանոնակարգում: Աշխարհի հայ համայնքների իրաւունքների եւ շահերի ապահովման ուղիներ եւ միջոցներ:

«ՐԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԵՂՈՒՄԱՆ ԿԱՐԳԵՐՆԵՐ»

1.- Ռուսաստանի տնտեսութեան

արդի վիճակը եւ ներդրումային հետանկարը:

- 2.- Հայաստանի տնտեսութեան արդի վիճակն ու ներդրումային հետանկարը: Երկրի ինտեգրացումը համաշխարհային տնտեսութեանը:
- 3.- Սփիւռքի դերը Ռուսաստանում եւ Հայաստանում տնտեսութիւնների ինտեգրացման եւ ներդրումների գործում:

Կոնֆերանսի մասնակցութիւնը պատ է, կարող են մասնակցել համայնքի այն ներկայացուցիչները, ովքեր հետաքրքրութիւն կը ցուցաբերեն քննարկուող հարցերի նկատմամբ:

«Միջազգային յարաբերութիւններ եւ արտաքին քաղաքականութիւն» աշխատախմբի աշխատանքին մասնակցելու համար պէկուցուր անհրաժեշտ է ուղարկել մինչեւ ս.թ. Սեպտեմբերի 5ը տեղեկացնելով Լիբանանում Հայաստանի դեսպանութեանը: Ուղեւորածախը եւ Մոսկուայում կեցութիւնը՝ մասնակցների հաշուին: Բոլոր հարցերով խնդրում ենք դիմել կոնֆերանսի կազմակերպիչին՝ հեռ. (095) 725 85 89, 969 17 69, ֆաքս՝ 924 00 53, e-mail, sar@mcn.ru, armenians@mail.ru:

Կոնֆերանսի նամակ-իրաւէրին, կոնֆերանսի ծրագիրին եւ մշակութային միջոցառումների ծրագիրին՝ հայերէն, ռուսերէն եւ անգլերէն լեզուներով կարող էք ծանօթանալ Հայաստանի դեսպանութեան հիւպատոսական բաժնի սպասարարին: Մաղթում ենք յաջողութիւններ: ԼԻԲԱՆԱՆԻՄ << ԴԵՄՊԱՆՈՒԹԻՒՆ

ԻՆՉ ԿԸՆԵՆ ԿԱՍ ԿԸՆԵՆ
ՓՈԼԻԿԼՕԹ
ԸՈԼԵՃԻ ԾՐՁԱՆԱԲՐՏՆԵՐԸ
«...Թիքիմի Թուրքիայի վկայական ստացայ Փոլիկլոթ Ըոլեճէ: Այժմ ունիմ իմ սեփական ձածորողական գրասենեակ...»:
Ն.ԹԱԼԵԻ ՏԵՄՊ

Ի ՃԵԴՈՒՄՆ ՄԵՐ ՆԱԽՈՐԴ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ
Դամակոյում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը յայտնում է, որ Սիրիայի Արաբական Հանրապետութիւնում հայոց լեզուի եւ գրականութեան միջազգային օլիմպիադայի առաջին փուլի յաղթող են ձանաչուել.
1.- Լուսին Օթրուեանը - Քարէն Եփփէ Ալզ. ձեմարան
2.- Յուշիկ Ղալաբեանը - Քարէն Եփփէ Ալզ. ձեմարան
3.- Նարին Պալիոպեանը - Լ. Նամարեան, Գ. Կիւլպէնկեան Կենտ. վարժարան
4.- Շողիկ Քուշկաճեանը - Լ. Նամարեան, Գ. Կիւլպէնկեան Կենտ. վարժարան
5.- Թամար Պապոյղեանը - Քարէն Եփփէ Ալզ. ձեմարան
6.- Մարինա Հանլեանը - Լ. Նամարեան, Գ. Կիւլպէնկեան Կենտ. վարժարան: Վերոյիշեալ աշակերտները ս. թ. Հոկտեմբերին կը մասնակցեն միջազգային օլիմպիադայի ամփոփիչ փուլին Հայաստանում:
ՍԻՐԻԱՅՈՒՄ << ԴԵՄՊԱՆՈՒԹԻՒՆ

ՄԵՍՐՈՊԵԱՆ
ԱՐՈՒԵՍԻՅ ՎԱՐՄԱՐԱՆԻ
20ԱՄԵԱԿԻ ՄԵՐՈՒՆԳԻՆ
ՊԱՏՈՒԲԵՐ ԾԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ
Որախոսութեամբ կը տեղեկացնենք, որ Շայ Կաթողիկէ Մեսրոպեան Արուեստիգ Կարծարանի Թեքմիք Պաշարոյեան դասարանի 16 աշակերտներն 15ը յաջողեցան 2001 - 2002 տարեշրջանի պետական քննութիւններում, Անտարկական Գիտութիւններ (Sales and Commercial Relations) մասնագիտութեան մէջ: Համապատասխան վկայականի արժանացան
Ազգի Անի Արա Թամար Կասիա Կարո Մարիա Մարիա Նարեկ Շանք Շողիկ Ռոզին Սոնա Վարանդ Զրիպի
Գաբրիէլեան Պալասանեան Ըոպեան Պաշարեան Սանդրոյեան (Պատուոյ յիշատակութեամբ) Դալիթեան Ճրթիեան (Պատուոյ յիշատակութեամբ) Գալեմտիեան Գապաբեան Փափաբեան Սարգիս Յակոբեան Ճապարեան Սիմանեան
Կը շնորհաւորենք մեր շրջանաւարտները այս յաջողութեան առիթով, իրենց կը մաղթենք ուսումնական նորանոր նուաճումներ, եւ կը վերահաստատենք մեր յանձնառութիւնը շարունակելու մեր կրթական առաքելութիւնը ի սպաս հայ ուսումնատեմէ երիտասարդութեան:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ
ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՀԻՄՆ ՊՆԴՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ»Ը Կ'ՈՐՈՇԷ ԴԻՄԵԼ ՆՈՐ ՔԱՅԼԵՐՈՒ

«Հայկական Ցեղասպանութեան անհիմն պնդումներուն դեմ պայքարի խորհուրդ»ը վերջերս Թուրքիոյ Ազգայնական Շարժում կուսակցութեան ղեկավար Տելլէք Պահչելիի հետ գումարուած շարք մը ժողովներու ընթացքին որոշած է գործադրել Ցեղասպանութեան պնդումներուն հակադարձող քանի մը ծրագիրներ:

ԹՐԵԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՆԴՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՆԱԽԱԶԵՌԵՆՈՒԹԻՒՆԸ

Ստորեւ տրուած յօդուածը լոյս տեսած է թրքական «Ռատիթալ» թերթին մէջ, լրագրող Մեհմետ Ալի Բըշլաւլիի տարագրութեամբ: Յօդուածագիրը լուսարձակի տակ կ'առնէ սորաստեղծ «Հայկական Ցեղասպանութեան անհիմն պնդումներուն դեմ պայքարի խորհուրդ»ին գործունէութիւնը՝ միաժամանակ կոչ ուղղելով «ազդեցիկ» ձեւով հակազդելու «Հայկական Ցեղասպանութեան պնդումներուն»: Յօդուածը կ'արտատպւի «Պոլսոյ «Մարմարա»-էն:

«Հայկական Ցեղասպանութեան անհիմն պնդումներուն դեմ պայքարի խորհուրդ» անուն կազմակերպութեան գոյութիւնը ցոյց կու տայ, թէ պետութիւնը վերջապէս բաներ մը ընելու պահանջը զգացած է տարիներէ ի վեր շարունակուող հայկական պնդումներուն դէմ: Այս կազմակերպութեան քարտուղարութիւնը պաշտօնը կը կատարուի ազգային ապահովութեան խորհուրդի քարտուղարութեան կողմէ:

Հայկական նախաձեռնութիւնը այնպիսի կէտի մը հասած է, որ այլեւս գրեթէ ամբողջ աշխարհի լրատուամիջոցները եւ խորհրդարանները սկսած են հաւատալ հայկական պնդումներուն: Թուրքիա միշտ կ'ամբաստանուի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԻԳՏԻՐ Կ'ԱՅՅԵԼԷ

«Թրքիոյ Տէլի Նիւզ» թերթը վերջերս տեղեկացուց, որ հայկական պատուիրակութիւն մը այցելած է Թուրքիոյ սահմանամերձ Իզմիր քաղաքը՝ երկու երկիրներուն միջեւ առեւտրական գործակցութեան կարելիութիւնները ուսումնասիրելու համար: Պատուիրակութեան մաս կազմած են ոչ կառավարական կազմակերպութեան մը ներկայացուցիչ Աշոտ Խուրշուդեան, Երկրագործական Շուկայի տնօրէն Արարատ Պապոյեան եւ Գիւմրիի կովկասեան կեդրոնի նախագահ Արթուր Մկրտչեան:

մասնէ եւ գետեղել համացանցի վրայ: Խորհուրդը պատրաստած է նաեւ թուրք գիտնականներուն հայերէն սորվեցնելու նախագիծ մը՝ Հայկական Ցեղասպանութեան շուրջ ուսումնասիրութիւնները դիւրացնելու համար:

Խորհուրդի չորրորդ ժողովքն էտք հրապարակուած յայտարարութիւնը ի շարս այլոց կ'ըսէ. «Քննարկուեցան երկրին եւ արտասահմանի մէջ լուսարձակութիւնները եւ տեղեկութիւնները հայ-թաթիլու աշխատանքները: Հայկական պնդումներուն դեմ աշխատանք տանելու համար պիտի հիմնուին հետազոտական զանազան հիմնարկներ: Խորհուրդը որոշեց նաեւ դիմել կարգ մը միջոցներու, որպէսզի հայերէն սորվիլ փափաքող մեր հայրենակիցներուն փափաքը իրականացայ:»

Սեպտեմբերի 27-ին Նահանգներու մէջ: Մենք շարունակ մեր պարբերաթերթին մէջ տեղ կու տայինք այդ լուրերուն, սակայն Չաղլայանի ղեկավարութեան գործոց նախարարութիւնը եւ աւելի վերջ պետական բոլոր կազմակերպութիւնները երկար տարիներ մնացին պարզապէս հանդիսական:

39 տարի աշխատած եմ արեւմտեան մամուլին համար եւ տեսած եմ, որ այդ կողմի մեր պաշտօնակիցները ինչպիսի կանխակալ կարծիքներով կը մտտնեն Հայկական Հարցին: Մամի Քոնէն, որ ինձմէ աւելի երէց է, տակաւին կ'ապրի այս դէպքերը: Ուրեմն, հայկական պնդումներուն մասին աւելի ճիշդ չէ՞, որ կարծիքը չօգտփութի այն անձերուն, որոնք օտար մամուլին հետ տեւաբար շփուած ունին:

Տելլէք Պահչելի, օրինակ, պէտք է չօգտփէ կարծիքը Կէօքչի Միսիհիօղլուի, «Ալիսիա Փրէս» գործակալութեան տիրոջը, որ լաւագոյն ձեւով կը ճանչնայ արեւմտեան մամուլը աշխարհը: Կէօքչի, որ մօտաւորապէս կէս դարէ ի վեր Փարիզի իր գործակալութեան ղեկավարն է, ամէն անգամ որ հայկական քարոզչութիւն մը հրատարակ կը քուրի, հեռաձայնէն կը դանդաղուի, կարծես թէ այդ պնդումներուն դեմ պայքարելու պարտականութիւնն ու պատասխանատուութիւնը իրեն տրուած ըլլաւ: Շարունակ կը հարցնէ. «Ինչո՞ւ չենք հակազդեր, բան մը չենք ընել»:

Չեմ յիշեր, որ մինչեւ այսօր պետական բարձր մակարդակի պատասխանատու մը լրջօրէն հակած ըլլայ այն հարցին վրայ եւ շփման մէջ մտած ըլլայ այն անձերուն հետ, որոնք տեղեկութիւն ունին հայկական պնդումներուն մասին:

Կը խորհիմ, որ Պահչելիի կազմակերպած ժողովն ալ այս խնդրին մէջ օգտակար բացատրութիւն մը չէ, այլ պարզապէս ձեւակերպական ձեռնարկ մըն է: Կը խորհիմ նաեւ, որ հայկական պնդումներուն դեմ դիմելու միջոցներու մասին պէտք է խորհրդակցիլ, մամուլէն դուրս, նաեւ խորհրդարանի այն անդամներուն հետ, որոնք այս մասին լայն փորձառութիւն եւ ծանօթութիւն ունին:

ԿԱՐՍ - ԳԻՒՄՐԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԿՐՆԱՅ ՎԵՐՍՏԻՆ ԳՈՐԾԵԼ

Կ'ԸՍԷ Հ. ՔԻՈՆ

Թուրքիոյ ազգային անվտանգութեան խորհուրդի խորհրդական Հասան Քիոնի վերջերս յայտարարած է, որ եթէ Թուրքիոյ մէջ ընկերվար - ժողովրդավարականները իշխանութեան հասնին, կարս - Գիւմրի երկրամասը կ'անջատուի Թուրքիոյ տարի կրնայ վերստին գործել: Քիոն նաեւ դեկլարար է Թուրքիոյ Եւրասիական ռազմավարական հետազոտութիւններու կեդրոնին Թուրքիոյ բաժանմունքին, ինչպէս նաեւ դասախօս է Անգարայի համալսարանին մէջ:

ԹՈՐԻՉԵԼԼԻ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ ԻՐ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Երեւանի կուսակցական թորիչը Թորիչլի անցեալ շաբաթ յայտնած է, թէ Միացեալ Նահանգներու կողմէ ՄԱԿի Ցեղասպանութեան Ուխտի ամբողջադաճաբէն աւելցնելու պահանջը, որ այս նպատակով Անգարայի յայտարարած յարաբերութիւնները կը մշակէ Մոսկուայի հետ:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՐԱՊՈՂԻ ՄԸ ՅՈՒՇԵՐԸ՝ ՖՐԱՆՍԵՐԷՆՈՎ

Փարիզի մէջ վերջերս լոյս տեսած է հայ-ալճերիական ծագումով հեղինակ Ֆարիտ Պուլթիլի «Մեմէ Արմենի» («Հայաստանցի Տատիկը») խորագիրով գիրքը, որ ունի ինքնակենսագրական բնոյթ:

Քիոնի մէջ նկարագրուած է, թէ ինչպէս իսլամ հերոս Մահմուտի կեանքը կը փոխուի, երբ ան կը հանդիպի քրիստոնէայ, Ցեղասպանութեան փրկուած իր մեծ մօր: Մահմուտ իր մեծ մօր կը ծանօթանայ, երբ վերջինը իր ամուսինին մահէն ետք Ալճերիայէն Ֆրանսա կը փոխադրուի եւ կը հաստատուի իր գաւազանի մօտ: Մեծ հայրս անոր հանդիպած է դարասիկիզին՝ Թուրքիոյ մէջ: մեծ մօրս ընտանիքը գոհացած է թրքական հայաձայններուն, հետեւաբար մեծ հայրս ամուսնացած է անր հետ եւ ապա անոնք դադարած են Թուրքիայէն եւ հաստատուած են Ալճերիա, ուր ծնած է հայրս, ըսած է հեղինակը Ֆրանսահայութեան հետ իր հանդիպումին ընթացքին:

Գիւմրիի մէջ հեղինակը կ'անդրադառնայ նաեւ իր մեծ մօր ընտանիքին, որուն բոլոր անդամները գոհացած են թրքական ջարդերուն:

Պատուիրակութիւնը դիմաւորող Իզմիրի առեւտրական գրասենեակի նախագահ Թայար Օրալ յայտնած է, թէ այս ամիս առեւտրականներու խումբ մը պիտի այցելէ Հայաստան: Ան դիտել տուած է, թէ անոնք եւս կը փափաքին բանալ Հայաստան-Թուրքիա սահմանը: «Մենք ալ կ'ուզենք առեւտուր ընել», աւելցուցած է Օրալ:

ՆՐԱՆՆԻՔԻ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄՏԱՀՈՎՈՒԹԻՒՆՆԸ SHOWER CABINE CENTER

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ ՀԱՄՔԻԿ ՀԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ HAMPIG SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

ԿՈՒՉՈՒԻ Ոսկերչական մոմի գործ աշխատող փորձառու օրիորդ մը: Դիմել՝ հեռ. 03-375724:

Միջապալին Քաղաքական Կեսնք

ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ՇԼԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԳԵՒՆԵՐ ԿԸ ՏԵՄՆԷ ԻՐԱՔԵԱՆ ՀԱՆՔԵՐՈՒՄՆ ՄԷՋ

Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի տապալումը Իրաքի քարիւղի նոր եւ հարուստ հանքերը պիտի բանայ արեւմուտքի գործարարներու դիմաց եւ յառաջ պիտի բերէ սէնսակաւ քարիւղէն կախեալ չըլլալու հեռանկարը:

Ոչ մէկ այլ երկիր ունի տակաւին «ձեռք չդպած» քարիւղի այնքան հանքեր, որոնք շահարկումը կրնայ մեղմացնել Մէնստակաւ Արաբիոյ մէջ արեւմտեան ներկայութեան պատճառով ստեղծուած լարուածութիւնը:

Հայր ճորձ Պուշին առաջնորդութեամբ, 1991ին Քուեյթի ազատագրումէն ետք, Մ. Նահանգներ մեծապէս հաստատեցին յետ պատերազմեան շահագրգիռ համաձայնութիւններուն վրայ, սակայն Իրաք ներխուժումի մը համար միջազգային զօրակցութեան ապահովումը գտնար թէ կրկնուի:

Ռուսիան յատկապէս, նաեւ՝ Ֆրանսա եւ Չինաստան, երբեք ալ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի մնայուն անդամներ, մեծ յոյսեր ունին «ազատագրեալ» Իրաքէ մը պարգեւատրուելու: Այս առնչութեամբ անոնք խոստումներ կ'ակնկալեն Միացեալ Նահանգներէն, վերջինը կրնայ պէտք ունենալ անոնց քաղաքական աջակցութեան:

Նախագահ Պուշին օգտագործած է ահաբեկչութեան դէմ պատերազմը՝ պնդելու համար Հիւսիսային բեւեռին մէջ պեղումներ կատարելու իր ծրագիրը, սակայն նախատեսութիւնները կ'ըսեն, թէ Այաթաբայի քարիւղի պահեստները Ծոցի պահեստներէն նուազ են: Ուաշինկթընի Ռազմավարական եւ Միջազգային Հետազոտութիւններու կեդրոնի աշխատակից Անթոնի Քորտսոն կ'ըսէ, թէ Միացեալ Նահանգներու համար Ծոցի անվտանգութեան երաշխաւորումը նոյնքան կարեւոր է, որքան՝ Իրաքի մէջ որոշ հանքերու հասնիլը:

«Կը գտնուինք ընթացքի մը մէջ, որուն շարունակութեամբ Ծոցի քարիւղին ապահովումը 2020ին աւելի քան կրկնապատկուած պիտի ըլլայ: Ծոցի անվտանգութիւնը չափազանց վճռական հարց է», կ'աւելցնէ ան:

Իր կարգին, «Միտլի Իսթ Ինդուսթրի Սըրվէյ»-ի Ծոցի լուրերու բաժնին խմբագիր Ճեյմս Պաթ կ'ըսէ. «Սատտամի տապալումը խորքին մէջ չէ գործադրուած է վերջին վտանգին, որ կը սպառնայ ընդհանրապէս Ծոցի քարիւղին արտադրութեան հաստատումը»:

Իրաք ունի 112 միլիարտ տակաւի քարիւղի պահեստներ, երկրորդ մեծագոյնը՝ Մէնստակաւ Արաբիոյ պահեստներէն ետք (265 միլիարտ տակաւի): Իրաքեան պաշարները եթէ անվտանգ են Հիւսիսային ծովուն մէջ քարիւղի ընկերութիւններ կրնան նաեւ յաւելեալ շահ ունենալ: Իրաք կը նախատեսէ, որ իր ընդհանուր պա-

շարները հասնին մինչեւ 220 միլիարտ տակաւի:


Հարաւային Իրաքի մեծագոյն երեք հանքերը՝ Մ ա ժ ն ու ն , Ա ռ եւ մ տ ե ա ն Քուեյթ եւ Նահր Ումար միասնաբար կրնան արտադրել Քուեյթի արտադրութեան չափ: Առաջին երկու հանքերուն արտադրութիւնը կրնայ հասնարի Բաթրի օրական արտադրութեան՝ 700 հազար տակաւ: «Ասոնց նման ոչ մէկ բան կայ աշխարհի վրայ: Այս մէկը մեծ պարգեւ է», կ'ըսէ Ճեյմս Պաթ:

Վիթթարի այս հանքերուն պեղումը եւ քարիւղի արտահանումը, որ պատերազմի եւ պատժամիջոցներու պատճառով դադարած է աւելի քան երկու տասնամեակէ ի վեր, նաեւ աշխարհի տարածքին ամէնէն քիչ ծախս ենթադրող ծրագիրներէն մէկն է: Եթէ Միացեալ Նահանգներ կարողանան երաշխաւորել յետ սատտամեան Իրաքին կայունութիւնը, առաւելագոյնը հինգ տարուան ընթացքին, ճարտարաբանութի մասնագէտներ կ'ըսեն, որ նշեալ հանքերը վերստին արտադրելու կրնան սկսիլ եւ Իրաքի նախապատերազմեան արտադրութիւնը՝ օրական երեք միլիոն տակաւ, կրնայ հասնիլ օրական եօթը կամ ութ միլիոն տակաւի:
